ՀԱՇԻՒ

ի նպաստ Թիւրքահայաստանի հայ տառապեալների

ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ

Վերջին անգամ հրատարակուած հաշուից յետոյ (տես «Մշակ» № 31, 13 փետրվարի 1909) Մասնաժողովը հետևեալ նուէրներն է ստացել. 1) «Գործի» խմբագրութիւնից՝ 4-րդ անգամ 400 ր., 2) Թիֆլիսում հ. Յովսէփ վարդապետ Մարգարեանից՝ 3 ր., 3) «Գործի» խմբ. 5-րդ անգամ՝ 500 ր., 4) Բագուից տիկին Սոֆիա Լազարեան Մարտիրոսեանից՝ իր պսակադրութեան 20-ամեկի տօնման ծախքի փոխարէն՝ 100 ր., 5) Ա. Վէրմիշեանից՝ «Бакинское Эхо», «Баку» *թերթերի միջոցով հանգանակուած 380 ր- 44 կ., 6) «Գործի» խմբագրութիւնից 6-րդ անգամ՝ 400 ր., 7)* «Баку» *թերթի միջոցով Ս. Աթաբէգեանի գործարանի ծառայողներից և բանուորներից 42 ր. 75 կ., 8)* «Баку» *թերթի միջոցով Բագուում հանգանակած ի նպաստ ադանացիների՝ 166 ր. 9 կ., 9) «Մշակի» խմբագրութիւնից 8-ը անգամ՝ 500 ր., 10) «Մշակի» խմբագրութիւնից 9-րդ անգամ՝ 200 ր., 11) Աստրախանի հայ հասարակութիւնից՝ ուղարկած յանուն Ա. Մելիք-Ազարեանի՝ 1851 ր.։ Ընդամենը 5044 ր. 15 կ.։*

Յունիսի 19-ին Մասնաժողովը փոխադրել է Կ. Պոլիս ռուսական դեսպանատան՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքին յանձնելու համար, ի նպաստ Աղանայի և Հալէպի նահանգների հայ սովեալների, 400 օսմ. լիրա։

Մասնաժողովն իր գործունէութեան սկզբից մինչ 30 յունիս 1909 թ. հանգանակել է ընդամենը 19,936 ր. 92 կ.։

Ցիշեալ գումարից փոխադրել է Կ. Պոլիս ռուսական դեսպանատան միջոցով հայ տառապեալներին բաժանելու՝ 36,000 ֆրանկ և 400 օսմ. լիրա, որի համար վճարել է 17,189 ր. 05 կ.։ Իսկ մինչև այժմ դիւանական և այլ մանր ծախք եղել է 277 ր. 86 կ., ընդամենը 17,466 ր. 91 կ., մնում է կանխիկ 2470 ր. 01 կ., որից 2377 ր. 20 կ.-ը պահւում է Թիֆլիսի Առևտր. Բանկում ընթացիկ հաշուով, իսկ 92 ր. 81 կ. դանձապահի մօտ։

Նուէրների ընդունելութիւնը շարունակւում է։ Խնդրւում է նուէրներն ուղարկել Մասնաժողովի դանձապահի հասցէով՝. Тифлисъ, контора А. И. Манташева и К, Аракелу Саруханяну, *կամ* Tiflis, Société Mantacheff et C-ie, A. Saroukhan.